« Քանաքեռ - Զեյթուն » Բժշկական կենտրոն » ՓԲԸ
"Медицинский Центр Канакер – Зейтун"
" Kanaker – Zeytun " Medical Center"

Երևան-14,Ներսիսյան 7,հեռ.28-58-09 Ереван-14,Нерсисяна 7, тел. 28-58-09,

N – 5/17-283

«03» նոյեմբերի 2014 թ.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<Քանաքեռ-Զեյթուն>> ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքներ:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «**ՔԶԲԿ-14/7-ՇՀԱՊՁԲ-11/4**»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Հ. Ներսիսյան 7, ադմինիստրատիվ մասնաշենք, 3-րդ հարկ հասցեով, մինչև 2014թ. նոյեմբերի 14-ը, ժամը 10:30-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Է.Գրիգորյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն ք. Երևան, Հ. Ներսիսյան 7, ադմինիստրատիվ մասնաշենք, 3-րդ հարկ հասցեով, մինչև 2014թ. նոյեմբերի 14-ին, ժամը 10:30-ին:

Գնման առարկա է հանդիսանում <<Քանաքեռ-Զեյթուն>> ԲԿ ՓԲԸ -ի կարիքների համար՝ Դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերումը:

<<Քանաքեռ-Զեյթուն>> ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար՝ Դեղորայքի և պատվաստանյութերի մատակարարման (որոնք կազմված են՝ 2 չափաբաժիններից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը ներկայացված են կից ներկայացված պայմանագրի նախագծի N 1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N5), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N 5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Մասնակիցները հայտով ներկայացնում են նաև իրենց կողմից առաջարկվող ապրանքների տեխնիկական նկարագրերը:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և մասնակիցների կողմից ներկայացվող փաստաթղթերի օրինակելի ձևերը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

<<Քանաքեռ-Զեյթուն>> ԲԿ ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ info@egprocurement.am: